


M/446

20
239



ԲՕԼ Տ՛ԱՐՊՈՒՎԻԼ

ԿՈՒԶ ՍԻՄՈՆԸ

ՎԻՊԱԿ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵՆԷՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. Յ. Բ.



Ս. ՂԱԶԱՐ — ՎԵՆԵՏԻԿ

1924

6

ԲՕԼ Տ՝ԱՐՊՈՒՎԻԼ

ԿՈՒԶ ՍԻՄՈՆԸ

ՎԻՊԱԿ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵՆԷՆ

ԹԱՐԳՄԱՆԷՑ

Հ. Յ. Բ.




Ս. ՂԱԶԱՐ — ՎԵՆԵՏԻԿ

1924

ՀԱՐԲ ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԿՈՒԶ ՍԻՄՈՆԸ



ԳԼՈՒԽ Ա.

— Վիլէտ, գոչեց Տորէն:

Դուռը բացուեցաւ: Անփութօրէն հագուած մարդ մը, կարմիր տառատուկ մը գլխուն վրայ ձգած՝ ներկայացաւ:

— Ասիկայ շուտով մը արբայարանի բանտապետին ղրկէ:

— Շատ լաւ, քաղաքացի երեսփոխան: Այսչափ միայն:

Տորէն գլխովը նշան մ'ըրաւ և մինչդեռ Վիլէտ կը քաշուէր՝ ան դարձաւ և ընկզմեցաւ իր գրասեղանին առջեւի թիկնաթոռին մէջ:

Տորէն Գոնվանսիոնի անդամներուն ամենէն անգութներէն և ամենէն աւելի արդարացի կերպով արհամարհուածն էր:

— Գարշելի թրթուր մըն է աս, ըսած էր Տանդոն, որուն համար Տորէն անոր

ոխակալութեամբ դատապարտութեան քուէն տուաւ:

Ամենաճիշդ նմանութիւն. մագաղաթի նման թուի մորթովը, խորախորշոմ, ցած ու նեղ ճակատովը՝ ակամայ կը յիշեցնէր այս զգուելի անասունը:

Մանաւանդ այս իրիկուն, Դեկտեմբերի աղօտ լուսովը՝ անիկայ աւելի ահաւոր կ'երեւար՝ նստած իր գրասեղանին առջև, ուր անճարակութեամբ կը ձարուէր անընթեռնի բառեր: Իր բիրտ, հեշտամուլ, չափազանց լայն բերանը կը կծկուէր զըշին ծամածուռ ձկերուն հետեւելով: Ներս գացած արիւնոտ աչքերը իրենց ակնակապճին խորը չարագուշակ փայլով մը կը փայլէին:

Տորէն՝ երկու տարիէ ի վեր ամէն գիշեր այս տեսակ գործերով զբաղած էր:

Նա՝ ի սկզբան հոգաբարձուն էր Օվեոնիացի հարուստի մը զոր արդէն կը կեղեքէր և հազիւ թէ Յեղափոխութիւնը պայթեցաւ, զանիկայ բոլորովին կողոպտեց: Առաջին շփոթութեան սկիզբը իր տէրը աքսորել տուաւ և երբ անոր ինչքերն ալ ծախու հանուեցան, ինք անոնց տիրացաւ չարագործի մ'օգնութեամբ:

Երբոր Փոնվանսիոնին երեսփոխաններ կ'ընտրուէին, Տորէն ետեւէ եղաւ ընտրու-

թեան և յաջողեցաւ: Նախ կեդրոնի խումբը մտաւ Մարէի մէջ ինչպէս որ կ'ըսէին, և կամաց կամաց յառաջ նետուելով Լեռնականներու կուսակցութեան մէջ մտաւ: Այս ժամանակներս՝ 1793ին վերջերը, Տորէն Ռոպէսբիէրի տեղապահը և սիրելին էր:

Բարիզ հասնելէն ի վեր գերի եղած էր ան իր չար միտումներուն: Ստէպ, շնորհիւ խորհրդարանին մէջ ունեցած իր ազդեցութեան, բանտեր կը մտնէր և բանտարկեւորահիներէն որուն գեղեցկութեանը որ կը հաւնէր, կ'առաջարկէր ընտրել կամ իր ձեռքը և կամ կառափնատը: Ասոնցմէ ոմանք դիմադրած էին և ոմանք տեղիք տուած. քանի մը ամիս վերջը կամ կառափնատը, կամ աքսորը կ'ազատէին զինքը այս թշուառներէն:

Վիլէտին տրուած հրամանը նոր զոհի մը համար էր: Տորէն՝ Ռընէ տ'Ուպէնի խնդրոյն վերաբերեալ թղթերը կը զարձանէր, երբ վերջին թուղթ մը ձեռքը առնելով բացագանչեց.

— Բա՛. սա իմ հին տիրոջս եղբոր աղջիկն է: Աւելի լաւ: Օրիորդ տ'Ուպէն, հիմայ զուն հոս պիտի ըլլաս՝ զրեթէ քու հին կահ կարասիներուդ մէջ:

Տորէն գոհ հայեացք մը ձգեց իր շուրջը:

Սենեակը՝ ուր նա կը գտնուէր լի էր թանկագին իրերով. որմերը զարդարուած էին անուանի վարպետներու նկարներով. Վատոյ, Լանքէ, Ֆրակոնար հոն քովէքով կեցեր էին:

Բայց, ամէն կողմ, ամէն առարկայի վրայ կը տարածուէր փոշիի թանձր խաւ մը որ գոյները կը նուաղեցնէր, նրբեքանգները կը միակերպէր: Տորէնի զգեստն ալ մի և նոյն խեղճ վիճակին մէջ էր: Նորոյթն աս էր, և անհրաժեշտ էր այսպէս հագուիլը: Միայն Ռոպէսըիէր կրնար հագուիլ սրգուիլ առանց ազնուապետական կոչուելու:

Դուռը զարնուեցաւ. Տորէն գլուխը վերուց:

— Նավրի զօրավարը հոս է, իմացուց վիլէտ:

— Թո՛ղ հրամմէ, պատասխանեց Տորէն:

Քսանչորս — քսանհինգ տարեկան երիտասարդ մը յառաջեց սենեկին մէջ, սուրն ի քարշ ձգած մարմարեայ սալաքարին վրայ և մեծ աղմկով հնչեցնելով իր կօշկին խթանը:

— Գալդ բնաւ չէի յուսար. սակայն բարի եկար, զոչեց, Տորէն ոտք ելլելով, Արէս վկայ, երբ դուն կը մտնես վառօդի հոտ կ'առնեմ:

Ժպիտ մը ծալլեց սպային շրթունքը. ան առանց պատասխանելու բնական հանդարտութեամբ մը՝ իբրև իր տան մէջ ըլլար, ձգեց ինքզինքը մօտակայ թիկնաթոռի մը վրայ:

— Չէի կարծեր որ այսչափ շուտ դառնայիր քու առաքելութենէդ, ըսաւ Տորէն. դեռ երէկ առինք քու յաջողութիւններուդ լուրը: Օրուան դիւցազը պիտի ըլլաս: Գոն վաճառուք քեզի շնորհաւորութիւններ քուէարկեց:

— Ո՛հ, ասոր համար... Միթէ հարկ կ'ա՞ր, պատասխանեց Նավըրի՝ որուն ճակատը խորշոմեցաւ: Ողորմելի յաջողութեան մը համար՝ գիտես, որքան արին թափուեցաւ:

— Թող ըլլայ, գոչեց Տորէն, վնաս չունի. ոռմբի ձայնը միայն պէտք է այս կատաղի ըմբոստներուն դէմ: Յեղափոխութիւնը պէտք է որ յաղթէ. մեղք անոնց որոնց արինը կը թափուի:

— Այդ ես ալ գիտեմ. բայց, քաղաքացի երեսփոխան, եթէ տեսնայիր երկու ամսէ ի վեր ոռմբերով հնձուած այս թշուառները՝ որոնք վերջապէս մեզի պէս ֆրանսացի են և քաղաքացի միլիոնյն Հասարակապետութեան, զթուլթիւնդ պիտի շարժէր և...

— Եւ զթութիւնս: — Տորէն ծիծաղիլ սկսաւ. — զթութիւնը յեղափոխական չէ: Քեզի խորհուրդ մը տամ, Նավրի, զթած ըլլալէ զգուշացիր. կրնան յիշել որ դուն ազնուապետական մ'էիր: Հիմայ ա՛ռ ա- սիկայ և կարգա՛. Ռոպէսբիէրի նամակն է... Ահաւասիկ Գոնվանսիոնի վճիռը... գալով ինձ՝ տեղեկագիրս կը շարունակեմ:

Սպան՝ թուղթերը առաւ և ուշադրու- թեամբ աչքէ անցուց, մինչդեռ Տորէնի գրիչը կը սահէր թուղթի մը վրայ:

Նավրի, կամ լաւ ևս Ատրիէն-Վիկտոր տը Նավրի, նշանաւոր ցեղէ կը սերէր: Օգոստոս 10ին ինքն ալ պիտի սպաննուէր, բայց իր բարեկամներէն մէկը, մոլեռանդն հայրենասէր մը, զինք կ'ազատէ ժողո- վրդեան կատաղութենէն, և ամէն քննու- թենէ ալ խուսափելու համար՝ կը զինուո- բագրէ զանիկայ կամաւորներու շարքերուն մէջ, որոնք դէպ ի սահմանագլուխը կը վազէին օտար թշնամին վանելու համար: Նավրիի արիութիւնը, ռազմագիտական հմտութիւնը, շուտով զինուորական աս- տիճաններու կը բարձրացնեն զինք: Նա կամաց կամաց յեղափոխական գաղափար- ներով կը զինովնայ, այնպէս որ շնորհիւ իր ներշնչած վստահութեան՝ իրեն կը յանձնուի Ֆրանսայի Հարաւ - Արեւ-

մտեան կողմը ծագած ապստամբութիւն մը նուաճել:

Աս էր՝ եղած յաջողութիւնը՝ որուն համար Տորէն կը շնորհաւորէր:

Սա առաջին անգամ Նավրիին կը հանդիպի Հասարակաց Փրկութեան մասնաժողովի մը նստին մէջ: Հրապուրուած անոր վայելուչ հասակէն, վսեմ կերպարանքէն և զինուորական կերպէն, հետը կը կապուի, և այլ և այլ պարագաներու մէջ կը նպաստէ անոր աստիճաններ ընդունելու համար:

Նավրի որ և է համակրանք չունէր երեսփոխանին հանդէպ, բայց ըստ բաւականի խորամանկ էր զայն չանդրադարձնելու համար:

Երբ ընթերցումը լմնցուց՝ սպան ծալլեց նամակը և գրպանը դրաւ:

Տորէն զրիչը ձգեց, և քիչ մը ժամանակ բարեկամաբար խօսեցան այլ և այլ նիւթերու վրայօք: Յանկարծ ձայն մը և հրացաններու կոթին գետին տրոփեցնելը զիրենք ընդհատեց:

Դուռը բացուեցաւ:

— Ոստիկանները հոս են տ'Ուպէն քաղաքացուհւոյն հետ, ըսաւ Վիլէտ:

Այս անունը լսելուն պէս Ատրիէն՝ որ ոտք ելած էր մեկնելու համար, սարսոռ-

ցաւ: Բարեբախտաբար Տորէն շատ զբա-
ղած ըլլալով բան մը չանդրադարձաւ և
ըսաւ.

— Ներէ՛, Նավրի, կը խնդրեմ որ քա-
շուէիր: Տէրութեան գործերը աւելի նա-
խադասելի են և դուն... բայց ի՞նչ ու-
նիս, հիւանդ ես, հարցուց, Ատրիէնի տըժ-
գունիլը տեսնելով:

— Տ'Ոպէն՝ բարեկամներէս մէկն էր,
պատասխանեց սպան. Վիլէտին ըսածէն
և աղջկան բանտուած ըլլալէն կ'ենթա-
դրեմ որ ինքն ալ ձերբակալուած է:

— Ծերունի տ'Ոպէն անցեալ չորեք-
շաբթի գլխատուեցաւ:

— Ի՞նչ յացանքի համար:

— Ինչ յանցանքի համար. ի՞նչ կ'ը-
սես, միթէ նա ազնուապետական չէր:

— Հասկցայ, հասկցայ:

— Լաւ ուրեմն: Կը ճանչնաս իր աղջիկը:

— Անգամ մը միայն տեսեր եմ զինք,
պատասխանեց Նավրի:

Տորէն աչքերը անոր վրայ սևեռեց:
Բայց Ատրիէն արդէն իր բնական ան-
վրդով կերպարանքը առած էր:

— Ասկէ զատ, աւելցուց Տորէն, ամբողջ
այս ընտանիքը վտանգաւոր է: Ասկէ յա-
ռաջ բան մը չլսեցիր Սալիւսի եր-
բեմնի դուքսին վրայօք:

— Պ. տ' Ուպէնին եղբայրը:

— Քաղաքացի տ' Ուպէնին եղբայրը,
ճշդեց Տորէն:

— Այո՛, անոր վրայօք խօսուիլը լսեր
եմ, բայց երբեք չեմ տեսած զինք: Ար-
դեօք ո՞ւր կը գտնուի հիմայ:

— Սատանային քով:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, քաղաքացի ե-
րեսփոխան:

— Ըսել կ'ուզեմ որ բանտի մէջ մե-
ռաւ, ինչպէս որ ինձ գրեցին: Կեանքին
մէջ թէ որ խելացի գործ մ'ըրաւ՝ ա՛յ է:
Ծայրայեղ ժաքոպէն էր յեղափոխութեան
սկիզբը, յետոյ Օգոստոս 10ին մէկդի թո-
ղուց կուսակցութիւնը: Քիչ վերջ քաղա-
քական կռիւ մը ունեցաւ եղբօրը հետ՝
զոր կիսամահ ձգեց մենամարտութեան մը
մէջ: Բայց ժողովուրդը երբ գլխատեց
բռնաւորը, նախկին ազնուական Սալիւսին
դրօշակը դարձուց և թագաւորականներու
կողմը անցնելով պատրաստուեցաւ Քաբէթին
սպանութեան և մահուան վրէժն առնել:
Զինքը ձերբակալեցին, փախաւ: Դարձեալ
բռնուեցաւ և երկրորդ անգամ ալ ազա-
տեցաւ. բայց վերստին ձերբակալուեցաւ:
Եւ վերջապէս բանտի մէջ հիւանդանալով
մեռաւ, ինչպէս որ քեզ ըսի քիչ առաջ,
Սամսոնը զրկելով շատ ախորժելի պարտքէ

մը: Լսածիս կամեմատ անիկայ իր եղբոր
դուստրը շատ կը սիրէր: Բայց, միտքս
եկաւ, օրիորդը ինձ կը սպասէ դուրսը:
Ուրեմն երկրորդ անգամ կը խնդրեմ որ
քաշուիս երթաս:

Մեկնելու ատեն Ատրիէն սեղմեց երես-
փոխանին ձեռքը՝ զոր իրեն կ'երկնցնէր, և
ուղղուեցաւ դէպ ի այն դուռը ուսկից որ
եկած էր. բայց Տորէնի ձայնը զինք
կեցուց:

— Այն տեղէն չէ՛, միւս դռնէն:

— Ա՛հ, կարծեցի... ներեցէ՛ք, պա-
տասխանեց զօրավարը:

Նավրի ճամբան փոխելով՝ Տորէնին
ցոյց տուած դռնէն դուրս ելաւ:

— Օ՛ն, Վիլէ՛տ, մտցո՛ւր սա ազնուա-
պետական կիներ:

Ծառան նշան մ'ըրաւ և այդ դռնէն,
զոր կիսաբաց կը պահէր, ներս մտաւ բար-
ձրահասակ գեղեցիկ աղջիկ մը: Քիչ մը
յոգնածութիւն կը ցուցնէին անոր դի-
մագիծերը: Աչքերուն շուրջը կապտագոյն
շրջանակ մը կը գծուէր: Սակայն ջահին
լուսովը զոր Վիլէտ վառեց, նա յունա-
կան արձանի մը պէս շնորհալի երեցաւ
Տորէնին: Անբրկիւղ, վսեմ քայլերով յա-
ռաջեց նա դէպ ի երեսփոխանը:

Տորէն ձեռքովը նշան ըրաւ Վիլէտին

քաշուիլ երթալու և դառնալով երիտա-
սարդ կնոջ.

— Քաղաքացունի՛, ըսաւ ժպտելով
մը այնքան քաղցրութեամբ որքան որ
տգեղ դէմքը իրեն կը ներէր. դուն ինձ
շատ գունատ կ'երեւաս, կը վախճամ որ
բանտարգելութիւնը քեզ վնասէ: Կ'ուզե՞ս
նստիլ:

— Կարծեմ թէ՛ Պարոն, մեր խօսակ-
ցութիւնը երկայն պիտի չտեէ որ աթոռի
պէտք ունենամ:

— Ինչէ՞ն գիտես: Մտածէ որ գրեթէ
տանդ մէջ ես՝ ասոնք են քու հօրեղբօրդ
կահ կարասիքը, նախկին ազնուական
Սալիւսի դուքսին:

— Եթէ հօրեղբայրս իմ վրէժս պա-
հանջելու վիճակի մէջ ըլլար, պատաս-
խանեց օրիորդը, յաղթութեանդ երգը այդ-
քան բարձրաձայն պիտի չերգէիր:

Տորէն գոհացաւ պատասխանելով.

— Այլ ևս վախճալու բան չկայ, ար-
դէն՝ առաջուց քեզ իմացուցի որ անիկայ
մեռած է:

— Ինչէ՞ն գիտես. դիակը չեն գտած,
ըսաւ օրիորդ տ'Ուզէն:

— Շատ լաւ, ընդհատեց Տորէն, մեր
գործերուն վրայօք խօսինք: Կը յուսամ
որ, քաղաքացունի, այսօր ինծի պատաս-

խան մը պիտի տաս: Իմ քեզի ունեցած սէրս շատ մեծ է: Չեմ ուզեր տեսնել զքեզ կառափնատին վրայ: Ես պատրաստ եմ ի նպաստ քեզի վերջին փորձ մըն ալ ընել, և դուն գիտես թէ այս փորձը ինչ պայմանով պիտի ընեմ: Կինս եղիր և քեզ կ'երզնում խոստումս պահել: Միթէ մեծ Հասարակապետութեան պիտի չցուցնե՞ս որ ուրացեր ես քու ազնուապետական գաղափարներդ և գրկած ազատութեան և հաւասարութեան վարդապետութիւնները: Այն ատեն քեզի ներողութիւն ընդունելէն աւելի դիւրին բան չկայ, և ո՞վ պիտի համարձակի արգելք ըլլալ ամենակարող Տորէնին:

Թընէ անոր կը նայէր ցրտութեամբ առանց պատասխանելու: Հասարակապետականը նեղացած՝ դարձաւ թուղթ մը դրաւ զրասեղանին վրայ և գրիչը ձեռքը բռնելով.

— Ահաւասիկ ներումդ, կուզե՞ս որ ստորագրեմ:

— Ի՛նչպէս որ կը հաճիս, Պարոն:

— Ի՛նչպէս որ ես կը հաճիմ: Դու գիտես ուզածս, կարծեմ միտքս լաւ բացատրեցի քեզ. ես բան չեմ կարող ընել՝ եթէ դուն հետս ամուսնանալով՝ անոր իրաւունք չտաս:

— Արդէն երկու անգամ, պատասխանեց օրիորդը, ինծի այս առաջարկը ըրիր, և երկու անգամ ալ զայն մերժեցի: Որոշումս հաստատուն է, պիտի չփոխուի երբեք: Ինչո՞ւ համար ժամանակդ կը կորսնցնես պարապ խօսակցութեամբ:

Տորէն անոր խօսքը ընդհատելով.

— Իմ սէրս...

— Սէ՛րը, գոչեց օրիորդը, առանց ժամանակ թողլու որ խօսքը լսնցնէ: Սէ՛րը: Դո՞ւն ես այդ բառը արտասանողը: Սրբապղծութիւն մըն է դա:

Զայրոյթը կը ցոլար անոր աչքերուն մէջ, և արհամարհանք կը հնչէր թրթռացող ձայնին մէջ:

— Ո՛հ, գիտեմ, ըսաւ Օրիորդը, պատասխանելով բողոքի ձևով մը, դուն ամուսնութեան վրայօք կը խօսիս: Բայց, միթէ կարելի՞ է ամուսնութիւն կոչել այդ միութիւնը՝ զոր միայն ձեր վատանուն Հասարակապետութեան օրէնքները կը հաստատեն: Մոռցա՞ր ուրեմն, թէ ես ո՛վ եմ, և դուն ո՛վ, պարզ հոգաբարձու մը...

— Ես իշխանի որդի պիտի ըլլայի, պատասխանեց Տորէն, եթէ՝ երկի՛նք...

— Իշխանի՞ որդի. բայց ոչ պատուաւոր իշխանի մը ապահովապէս: Կրնա՞ս ինձ ըսել ի՞նչ եղան անոնք ամէնքը զորս

սիրեցիր՝ Մարի տ'Անկլոն, Բուլին Պովէ, Անթուանէտ տը Մոնֆոր, Սիմոնն....

— Կեցիր, մոնչեց հասարակապետականը, դէմքը բարկութենէն կապուտցած, աչքերը դաժան:

Նա այնպիսի սաստկութեամբ բռնեց նէրա թեզանիքէն որ վայրկեան մը Ռոնէին խրոխտանքը սմբեցաւ և աղաղակ մը փրցուց:

Յանկարծ ձայնը փոխելով՝ Տորէն ամբարտաւանութեամբ մ'աւելցուց, դէմքը ծովակաճ ահաւոր հեգնանգով.

— Կ'ուզե՞ս գիտնալ թէ ո՛ւր են անոնք. հետաքրքրութիւնդ շուտով պիտի գոհացնեմ. շաբաթէ մը զանոնք կը գրտնես: Վիլէտ:

Ծառան վերստին երևցաւ:

— Տա՛ր սա կինը:

Մինչդեռ անոնք կը հեռանային, Տորէն կատաղութենէն զողալով իր աթոռը դարձաւ ու մի քանի խօսքեր գրեց:

Ռոնէ տ'Ոպէնի գլխատման վճիռը ստորագրուած էր:

ԳԼՈՒԽ Բ.

Նավրի կը ստէր Տորէնին պատասխանելով թէ՛ մէկ երկու անգամ միայն տեսած էր օրիորդ տ' Ոսկէնը: Իրականին մէջ Ռոնէ և ինքը արդէն զիրար կը սիրէին երկայն ատենէ ի վեր:

Եթէ Տորէն իմանար որ այս երկու երիտասարդները՝ նախ իրարու մանկութեան խաղի ընկերներ, ու յետոյ քանի մեծնալով զիրար սիրած էին, թերևս իր խնամքը և արթնութիւնը բոլորովին ուրիշ դեր մը կատարէին այս ողբերգական դէպքին մէջ:

Բայց յանկարծակիի գալով զօրավարին անակնկալ գալստենէն, և սիրտն ու միտքը բոլորովին զբաղած սաստիկ տարփանքով, որուն երբեք գոհացում չէր գտած, չէր կարողացած անդրադառնալ բուն իրականութիւնը: Նավրիին տագնապը անցողական յուզում մը համարած էր՝ երբեմն օրիորդը ճանչցած ըլլալուն համար:

Աղմկով մը ճոնչեցնելով կօշիկները սալայատակին վրայ, ըստ իր սովորութեան,

ելաւ Նավըրի Տորէնին սենեակէն, ու դռնէն անցնելով աւելի ամուր քայլերով սկսաւ քալել: Բայց երբ հասաւ նրբանցքին ծայրը, և ապահովցաւ որ Տորէնի ականջները այլ ևս իր քայլերը չէին կրնար լսել, շուտով մ'ետ դարձաւ վեր առաւ սուրը և մօտեցաւ դրան՝ մատներուն ծայրը կոխելով, կարելի եղածին չափ կամացուկ, և ականջը կպցուց դրան բանալիի ծակին: Անիկայ երբ հասկցաւ հասարակապետականին միտքը, քանի մ'անգամ մզում մը զգաց յարձակելու սենեկին մէջ և իր սուրին ծայրովը ստանալու Ռընէին ազատութիւնը:

Ոսկայն, Նավըրի արուեստին մէջ փորձառու՝ լաւ գիտէր որ յանդգնութեամբ չէր լիննար զործը, անխոհմտութիւն մը կրնար ամէն բան խանգարել: Բռնութեամբ պիտի չկարենար Ռընէն մահուանէն ազատել, և այդ բռնութիւնը միանգամայն զինքը պիտի կորսնցնէր:

Ան զսպեց զայրոյթը և սպասեց հոն՝ մինչև որ երեսփոխանը ճամբայ դրաօրիորդը: Եւ այն ատեն արագութեամբ դուրս ելլելով գնաց ծածկուեցաւ կառանցիկ դրան մը ստուերին մէջ Տորէնի տան դիմաց: Ատրիէն կ'ուզէր Ռընէ տ'Ոսկայնը տեսնել ու հետը խօսիլ: Բայց լ'նչպէս

պէտք էր շարժիլ՝ որ և է վտանգ հեռացնելու համար:

Մինչդեռ ինք հնարք մը կը փնտռէր՝ դուռը բացուեցաւ:

Ռընէ տ'Ոպէն դարձեալ՝ երեցաւ երկու զինուորներու ընկերացած: Փողոցի լապտերին լուսովը Նավրի ճանչցաւ համազգեստը Օնիի զօրաբաժնին որուն մէջ իր առաջին պաշտօնական աստիճաններուն հասած էր: Երբ խմբակը կ'անցնէր քանի մը քայլ հեռուն լուսաւորուած կըրպակի մը առջևէն՝ ան իր նշանածին պահապաններէն մին ճանչցաւ: Մարիէօ անուամբ զինուոր մը՝ զոր տասնեութ ամիս առաջ թշնամիներու ձեռքէն ազատած էր: Մարիէօ՝ Նավրիին այնքան երախտագէտ էր՝ որ այս պարագայիս մէջ անշուշտ պիտի օգնէր իրեն:

Նավրի ժամանակ չունէր ծրագիրը որոճալու: Միտքը դրաւ բախտը փորձել: Վերջին անգամ մըն ալ իր շուրջը լաւ մը դիտելով իջեցուց սաղաւարտը ճակտին վրայ և վազն ի վազ շրջան մ'ընելով, մօտ փողոցէ մը ետ դարձաւ և իբրև յանգէտս՝ յանկարծ ուղեկից զինուորներուն առջև ելաւ: Պահապանները ետ քաշուելով սուիները ուղղեցին. բայց երբ տեսան զինքը զօրավարի համազգեստով՝ հրացան-

նին բարձրացուցին և բարեկեցին։ Ռընէ մը-
տածութիւններուն մէջ ընկղմած բնազդմամբ
կանգ առած էր և նոյն իսկ գլուխն ալ
չվերցուց տեսնելու թէ արդեօք ինչո՞ւ չէին
քալեր։

— Ի՞նչ, դո՞ւ ես Մարիէօ, գոչեց Նավ-
րի, ուրախալի անակնկալ մը կեղծելով։
Շատոնցմէ՞ հեռացեր ես սահմանագլխին
վրայ պահպանութիւն ընելէ։ Անշուշտ,
հոս այլ ևս կայսերականներէն բռնուելու
վտանգի մէջ չես։

Ռընէ այս ծանօթ ձայնը լսելով աչ-
քերը վեր վերուցեր ու հեւալով շունչ
կ'առնէր կու տար։ Նայեցաւ Նավրիին
և անոր բազուկներուն մէջ նետուելով
մարեցաւ։

Ստնաձայն մը դողացուց սպային սիրտը։

Ատրիէն վախնալով որ՝ չըլլայ թէ Տո-
րէնին լրտեսը վրայ հասնի, յանկարծակիի
եկած երկու զինուորներու հետ՝ զորոնք
սպային յարգանքը անդամալուծեր էր,
ուղղուեցաւ դէպ ի հրապարակին ձախա-
կողմ՝ իր բնակարանը, ստիպուեցաւ աղ-
ջիկը մինչև հոն տանել և հապճեպով
ներս մտնելով զրաւ իր անկողնոյն վրայ։

Մարիէօի ընկերը վերստանալով իր պա-
ղարիւնութիւնը, ըսաւ.

— Զօրավար, մենք գործադրելու հրա-

մաններ ունինք, մի՛ արգիլէք մեր պարտքը կատարել: Մեզի յանձնուած է մինչև Աբրայարան տանիլ այս երիտասարդ քաղաքացուհին: Այնպէս չէ՞ Մարիէօ:

Մարիէօ տազնապած նայեցաւ իր սպային: Ատրիէն տեսնելով որ ճշմարտութիւնն ըսելը լաւագոյն միջոց մըն է, պատասխանեց.

— Տ՛Ոպէն քաղաքացուհին իմ նշանածս է, ուստի ասոր համար...

Պահապանները ցնցուեցան: Սակայն Նավրի ժամանակ չտալով անոնց որ խօսքը կտրեն, շարունակեց.

— Գիտեմ իրեն դէմ եղած դատավճիռը. բայց քանի որ առիթը ունեցայ կը փափագիմ վերջին ողջոյնս տալ: Մարիէօ, դու՝ զոր ազատեցի, և դո՛ւն քաղաքացի, զինուոր որ մի և նոյն համազգեստը կը կրես և նոյն դատը կը պաշտպանես ինչպէս ես, ինծի չէ՞ք ներել: հրաժեշտի բարեւ տալ կնոջ մը զոր ես կը սիրեմ:

Զինուորական արուեստը, և պատերազմի ունակութիւնը թէպէտ և այս մարդոց սիրտը կարծրացուցեր էին, այնուհանդերձ սիրոյ ձայնը զիրենք ի գուր շարժեց: Երկիւղի վերջին սարսուռը ըսել տուաւ զինուորին.

— Լաւ, բայց թէ որ մեր այս օրի-

նազանցութիւնը յայտնուի, գիտէք թէ ինչ
կու գայ մեր գլխուն:

— Ո՛վ պիտի կարենայ զձեզ մատնել:

— Անշուշտ քաղաքացի Տորէնը. թեր-
ևս իր լրտեսներէն մին....

— Ո՛չ, կարելի չէ, պատասխանեց
Նավրի: Գիշերը բաւական մութ է, ոչ ոք
զձեզ տեսաւ: Արդէն ես երեք վայրկեան
միայն կը խնդրեմ ձեզմէ տ'Ոպէն քաղա-
քացուհւոյն հետ տեսնուելու համար: Մի
և նոյն ատեն դուք հսկեցէք դրան առջև.
եթէ մէկը ուզենայ ներս մտնել, ըսէք որ
քաղաքացուհին ճամբան մարելով հոս բե-
րիք:

Խղճահարութեան վերջին մնացորդին
ալ յաղթելու համար, զօրավարը զրպա-
նէն հանեց քանի մը ոսկի:

Դրամին փայլը շուտով ամէն վախ փա-
րատեց: Նոյն պահուն աղջիկը բացաւ իր
աչքերը:

— Տեսէք, ըսաւ Նավրի, ինք իրեն
կու գայ: Դուք հեռացէք, ես կարելի ե-
ղածին չափ կարճի կը կապեմ:

Ձինուորները հեռացան:

Յանձարծ պահապանը վերջին կասկած
մ'ալ ունեցաւ:

— Արդեօք վարպետութիւն մը չկա՞յ
այս բանիս մէջ:

— Վարպետութիւն. ի՞նչ ըսել կ'ուզես:

— Քաղաքացի սպայ, միթէ զանկայ փախցնելով ազատել կամ ասոր նման ուրիշ գործ մ'ընել պիտի չփորձէք:

Նավրի ակնարկ մ'ուղղեց Մարիէօյին որ իր միտքը շուտով հասկցաւ:

— Թո՛ղ, մի՛ վախեր: Զօրավարը ազնուահոգի է. ես գինք կը ճանչնամ, պատասխանատուութիւնը իմ վրաս: Միւս կողմէն պիտի հսկենք զրան առջև. իսկ գալով պատուհանին՝ վախնալու բան չկայ, տես վանդակափեղկերը:

Երկու պահապանները դուրս ելան:

— Ո՞ր կը գտնուիմ մրմռաց Ռընէ, որ սկսեր էր ինքն իրեն գալ:

Յետոյ իր շուրջը դիտելով աչքերը Ատրիէնի վրայ ինկան որ ծունր զրած էր անկողնոյն մօտ: Ան ձեռքը զրաւ սպային գլխուն վրայ:

— Ո՛հ, դո՛ւ, դու ես: Զիս ազատելու եկար. քու տանդ մէջ եմ: Պահապանները ճամբեցիր: Ազատ ենք:

Ատրիէն ստիպուեցաւ ուղղել անոր սըխալը:

— Ուրեմն դուն լսեցիր ի՞նչ որ երեսփոխանը ինծի ըսաւ: Գիտես որ մահուան դատապարտուած եմ: Դուն այլ ևս չես

կրնար զիս ազատել, ո՛չ, ո՛չ մէկը կարող է զիս մահուանէն ազատել: Հայրս անցեալ շաբաթ գլխատուեցաւ այս դահիճներէն: Մայրս՝ եղբայրս քշուեցան յաքսոր: Խեղճ հօրեղբայրս աներևութացած է, չենք գիտեր ի՞նչ հանդիպեցաւ զխուռն: Ես միայնակ եմ, միայնակ, դժբախտութիւնը իմ վրաս է. ես մահուան դատապարտուած եմ աղետալի կերպով:

Երեսը ձեռքերուն մէջ ծածկելով սկսաւ հեկեկալ. Ատրիէն ջանաց զինքը մխիթարել, և երգուընցաւ անկարելին ընել զինքը ազատելու համար:

— Ռընէ', յիշէ որ ես Գոնվանսինի զինուոր եմ և երեսփոխաններու մէջ ունիմ ազդեցիկ բարեկամներ՝ որոնց ձեռքով կրնամ զքեզ ազատել:

— Բայց ոչ հիմակուան հանգամանքներու մէջ: Ո՛չ, սիրելի Ատրիէն, այլ ևս կորսուած եմ: Ա՛յ ուրիշ բան չմնար ինձ եթէ ոչ յանձնել հոգիս Աստուծոյ և երբեք չմտածել աշխարհիս վրայօք:

— Հաւատա՛ ինձի Ռընէ', հաւատա՛ և մինչև վերջ յուսա՛: Ամէն բանի պիտի դիմագրաւեմ զքեզ խալըսելու համար. եթէ չկարենամ զքեզ գլխատման բեմէն ազատել, միասին պիտի ելլենք հո՛ն:

— Ի՞նչ է ծրագիրդ, հարցուց Ռընէ վարանած դէմքով:

— Ծրագիր մը չունիմ, բայց Աստուած երկնքէն մեր վրայ պիտի գլթայ:

Դուռը զարնուեցաւ:

— Ժամանակը անցած է: Պէտք է որ բաժնուինք Ռընէ: Մնաս բարով, ո՛չ, ո՛չ, ցտեսութիւն:

Խեղճ Ատրիէն ժպտելու փորձ մ'ըրաւ: Օրիորդը արտասուալից ինկաւ անոր բազուկներուն մէջ:

— Ո՛հ, Ատրիէն, թէ որ այս վերջին տեսութիւննիս էր... Դեռ շատ երիտաւարդ եմ մեռնելու համար: Արդեօք ո՞ր ոճրին համար յանցաւոր եմ. եղո՛ւկ ինձ...

Պաղ սարսուռ մը ցնցեց անոր բոլոր էութիւնը:

— Վստահացիր ինծի մըմնջեց սպան:

Եւ գնաց դուռը բացաւ պահապաններուն և Ռընէն անոնց յանձնեց որ երթայ:

Քանի մը վայրկեան Ատրիէն լսեց գիշերուան լռութեան մէջ անոնց ոտքերուն ձայնը, ու քիչ վերջ լռեց ամէն բան, բաց ի ձմրան ցուրտ քամիէն որ կը հեծէր կիսաբաց դռնէն և բնակարանին լաւ զոցուած պատուհաններէն:



ԳԼՈՒԽ Գ.

Այս դէպքերուն վրայ հինգ օր անցեր էր։ Ատրիէն կը կրկնապատկէր իր ջանքը, սակայն Տորէնին ազդած երկիւղը շուտով կը վհատեցնէր ամենէն բարեացակամ պաշտպաններն ալ։ Նավըրի՝ երեկոյեան դէմ կը մտնէ քնակարանը, և արմուկը գրասեղանին կոթնցուցած կը մնայ, վերնազգեստը, սաղաւարտը և սուրը խառնափնդոր նետելով աթոռի մը վրայ։

Գիշերուան ստուերները կը թանձրանային։ Տնպահ տիկին Պապէնի վառած ճրագը որոշ ցոյց կուտար սպային զինուորական դէմքին տխուր արտայայտութիւնը։ Նա վհատութենէն մարած աչքերը փակած էր։

Փողոցին մէջ գարսնակիոջ երգին վերջին տողերը կը հնչէին։ Նոյն օրը բազմաթիւ գլխատումներ տեղի ունեցեր էին, և կիններու ամբոիքը հանդիսատես ըլլալէն կը դառնար ոռնալով, ահաւոր խօսքեր արձակելով որոնցմով ողջունաց էին նաև դժբախտ գոհերուն վերջին վայրկեանները։

Ատրիէն աթոռին վրայ տարածուած կը ջանար խորհիլ: Բայց այդ վայրագ երգին շեշտը անոր բոլոր մտածութիւնները կը ցրուէր: Նա այլ ևս չկարենալով ինքզինք զսպել՝ մօտեցաւ պատուհանին, ու պնռաց:

— Քիչ մը լռութիւն, քաղաքացուհիներ, և կամ ուրիշ տեղ գացէք՝ հոն վերջացուցէք ձեր ոռնոցները:

Կիներէն մէկը, ճշմարիտ հսկայ մը՝ որուն հերարձակ գլուխը ծածկուած էր կարմիր գլխարկով, արեամբ ներկուած դաշոյնը ձեռքին մէջ շողացնելով՝ սպային դէմ գոռաց:

— Վար իջի՛ր, իմ պզտիկ ագնուապետականս, եթէ կը յանդգնիս արգիլել մեր ձայնը:

Ատրիէն հեռացաւ:

Անոր ներս քաշուիլը լիրբ ծաղրաբանութեամբ և դժոխային ոռնոցներով ողջունուեցաւ:

— Ահաւասիկ քու զաւակներդ ո՛վ Հասարակապետութիւն, պոռաց Նավրի սոսկումով: Ազատութիւն՝ ահաւասիկ քու տուած պտուղդ, և ես... ասոր համար թափեցի արիւնս: Աստուած իմ, ներէ՛ ինձ:

Նստեցաւ ու երեսը ծածկեց՝ կարծես

ցնորք մը վռնտելու համար. և հուսկ մոռցաւ դիւահարները՝ որոնց ձայները կամաց կամաց կը կորսուէին հեռաւորութեան մէջ:

Շուտով մտքովը գնաց անոր զոր ազատելու երզում ըրած էր. բայց որ և իցէ հնարք չէր կրնար գտնել: Այդ յուսահատական կատաղութիւնը որ յատուկ է տրկարներուն՝ որոնք առանց պաշտպանութեան կը կրեն բռնաւորներու հարուածները, տակաւ առ տակաւ տիրեց նաև Նավբիին վրայ: Տխուր կապոյտ դալկութիւնը պատեց անոր երեսը: Մահուան ցնորք մը, Ռընէ տ'Ոպէնի կառքը քշուելով ուսմիկ ոճրագործներու մէջ՝ իր առջևէն կ'անցնէր: Անիկա ցնորքին մէջ կ'ուզէր նետուիլ անոր առջևը. սակայն անբռնոյթ ոյժ մը զինք բռնած կը գամէր կեցած տեղը:

— Ո՛վ երկիրք: Օգնութիւն. ո՛հ, ո՛վ պիտի օգնէ ինձ, պոռաց ան յուսահատութեան տագնապին մէջ:

Իբր պատասխան այս կոչին դրան մէկ հարուածը զինք ընդոստ արթնցուց: Մարդ մը՝ որուն դէմքը հազիւ կը նշմարուէր կէս մթութեան մէջ, անցած էր տան դրան սեմէն:

— Կրնամ քեզ օգնել, հարցուց անծանօթը խուլ ձայնով մը:

— Ո՞վ ես, գոչեց Ատրիէն շուտով վեր ցատկելով:

— Ես ո՞վ եմ. ինչ աղէկ հարցում, Նավրի. քիչ առաջ ձայնս կը ճանչնայիր: Ուրեմն քանի մ'օրուան մէջ փոխուեցաւ:

— Ահ Պելլըվիւ. դո՛ւն ես: Ներէ զքեզ ճանչնալուս. այնքան տկարացեր եմ, այնքան որ...

— Ըսել կ'ուզես որ զքեզ ազատ թողում իմ ընկերութենէս: Շնորհակալ եմ, կը մեկնիմ:

— Ընդհակառակն, խնդրեմ, կեցի՛ր, քեզի կարօտ եմ: Թերեւս դո՛ւ կարենաս ինձ օգնել: Մինչև հիմայ ինչո՞ւ արդեօք զքեզ չմտածեցի: Խնդրեմ, ներէ՛, քիչ մը փայտ նետեմ վառարանին մէջ կրակը արծարծելու համար:

Նորեկը նստեցաւ, կամ աւելի ճիշդ խօսելով՝ ինք զինք ձգեց աթոռի մը վըրայ: Ան երբոր վերարկուն հանեց՝ տեսնուեցաւ այնպիսի սպրկիկ վայելուչ զգեստ մը՝ զոր քիչ մարդիկ պիտի համարձակէին փողոցներուն մէջ կրել Սարսափի այս ահաւոր ժամանակներուն:

Ի՞նչպէս արդեօք կարելի էր որ Պելլըվիւ՝ իր մեծ ազնուականի հովերով կրցեր էր կիշօրյինեկն պրծիլ: Գաղտնիք մըն էր զա:

Զրոյց մը կը շրջէր անոր վրայօք, բայց ոչ ոք իր մասին փոյթ կը տանէր, և կամ չէին ուզեր ճշմարտութիւնը ճանչնալ: Շատ անգամ Նավրի տեսած էր հասարակապետականներու քով ազգային ժողովներուն մէջ՝ անոր քաղաքավարութեամբ հակաճառելը ամէնէն բարձրաստիճաններուն հետ: Ամէն մարդ անոր անոյշ կերպէն դիւթուած կ'երեւար: Ինքն ալ կարծես իր խօսակիցներուն կենաց մանրամասնութիւնները բնաւ չէր գիտեր: Սակայն անոր երթալէն յետոյ, զօրարարը լսած էր քանի մ'անձերու՝ իրարու մէջ փսփրսալը.

— Ո՛վ է այս մարդը, ուսկի՞ց կուգայ:

Նավրի գրեթէ բնական բերմամբ կապուած էր անոր հետ, թէպէտև քանի մը տիկիներ Տալլիէն քաղաքացուհւոյն սրահին մէջ պնդեր էին թէ՝ Պելլըվիլ հակառակ իր ազնուական կերպերուն՝ ոամիկ ժողովրդեան պետերէն մին էր և իր տեղապահն էր Սիմոն Կիյէ անունով չարագործ մը, որուն գոյութիւնը իր տիրոջ մէն աւելի խորհրդաւոր էր, և թէ մօտերս ահաւոր աւազակութիւններ գործած էր:

Պելլըվիլ նախ՝ ընդհատեց լռութիւնը:

— Լա՛ւ ուրեմն, սիրելի բարեկամ, ի՞նչ հանդիպեցաւ քեզի:

Ուորիէն անոր պատմեց գլխէն անցած

դէպքերը: Ստէպ անգօր զայրոյթի լուտանքներ կը փախչէին բերնէն: Երբոր լմնցուց խօսքը, գլուխը արմուկին կռթռնցուց և իր բարեկամին խորհուրդներուն սպասեց:

Պեղլըվիլ քիչ մը ժամանակ համր մնաց: Յայտնապէս՝ զանազան մտածութիւններ միտքը կը խռովէին: Վերջապէս նա ժըպտեցաւ: Թեթև և զուարթ դէմքով իբրև թէ պատմուած դէպքը ձախորդ կէտ մը չունենար և կամ իրեն համար բոլորովին անծանօթ ըլլար, պատասխանեց.

— Ըսել է թէ մեր կապտամորուս Տորէն բարեկամը նոր կին մը փնտռելու հետ է: Կը տեսնուի որ բաւական ճաշակի տէր մարդ է՝ քանի որ քու նշանածդ ընտրեր է: Բայց ինչ որ ցաւալին է, մերժումը մահուան վճիռ եղած է խեղճ աղջկան համար: Ինչո՞ւ համար մերժել:

Ատրիէն ասկէ սաստիկ գրգռուած, դառնութեամբ մը պատասխանեց.

— Սիրելի բարեկամ, կենաց մէջ կան այնպիսի բաներ, որոնք նոյն իսկ կեանքէն աւելի թանկագին են:

— Զարմանալին աս է, շարունակեց Պեղլըվիլ առանց իսկ ուշադրութիւն դնելու Նավրիի խօսքին ու շեշտին, շատ զարմանալի է, ամէն բանին ծայրը կին

մը կը գտնեն: Ըստ իմ կարծիքիս, ասիկայ յանցաւոր կին մըն է Ֆրանսայի ներկայ կացութեան մէջ: Հետաքրքրական պատմութիւն մըն է աս, ըսել կ'ուզէի...

— Ո՛չ, ո՛չ, ընդհատեց Նավրի: Քիչ մը լրջութիւն, կարծիքդ միայն ինձ յայտնէ. երկու կեանք կայ այս խնդրոյս մէջ:

— Ա՛հ, իրաւցնէ մոռցեր էի, ըսաւ Պելլըվիլ այնպիսի բնական շեշտով մը որ Նավրիէն զատ ուրիշ ամէն ոք կրնար խաբուիլ: Օրիորդը երբ պիտի գլխատու...

— Վաղը չէ, միւս օրը:

— Տորէն գիտէ՞, կամ կասկած մ'ունի՞ որ դուն որոշեր ես զանիկայ ազատել:

— Ամենեին ոչ:

— Ապահո՞վ ես:

— Ամենահաստատ կերպով:

— Շատ լաւ, նայէ որ բնաւ չկասկածի: Յաւալին ան է որ ինծի առաջուց իմացուած չէ այս բանս, կրնայի դիւրութեամբ ազատել օրիորդը: Հիմայ ժամանակ չկայ: Չե՞նք կրնար քանի մ'օրուան համար յապաղում խնդրել:

— Անկարելի է:

Պելլըվիլ դէպ ի պատուհան գնաց, և գիշերուան մթութիւնը դիտելէն ետքը՝ սկը-

սաւ քայլերդ մը զարնել ապակիին վրայ.
Ատրիէն անոր ուշադրութիւն կը դնէր:
Երկուքն ալ քանի մը վայրկեան այսպէս
լուռ մնացին:

Յանկարծ՝ Պելլըվիլ դառնալով.

— Լաւ հնարք մը գտայ: Ինձ այնպէս
կը թուի որ ասիկայ միայն կրնայ յա-
ջողիլ:

— Արդէն կը գուշակէի որ դուն պիտի
գտնեա, Պելլըվիլ, գոչեց Ատրիէն, և ոտք
ելլելով բարեկամին քով վազեց դէմքը
ուրախութենէն այլափոխուած:

— Սպասէ՛ Նավրի, քեզ չըսի թէ նը-
շանածդ կրնամ ազատել, պարզ գաղա-
փար մ'ունեցայ, հասկցա՞ր:

— Շուտ ըրէ՛, ըսէ՛:

— Կեցի՛ր վայրկեան մը:

Պելլըվիլ զգուշութեամբ դրան մօտենա-
լով բացաւ և աչք մը տուաւ դուրսը: Իր
հետազօտութենէն հանգստացած և ապա-
հով որ մէկը չկայ, դարձաւ դէպ ի Նա-
վրի.

— Նստէ՛:

Ատրիէն հնազանդեցաւ:

Պելլըվիլ մօտեցնելով աթոռը՝ քիչ մը ժա-
մանակ ցած ձայնով խօսեցաւ անոր հետ:

Ատրիէն գլուխը թօթուելով պատաս-
խանեց:

— Կը վախեմ որ չյաջողի:

— Ձեռքէս ասիկայ միայն կու գայ և յաջողութիւնը շատ հաւանական կը թուի ինձ:

— Եթէ անգամ մը ռամիկը ոտք ելլէ, շատ դժուար է որ վերջը հանդարտի:

— Ո՛հ, խղճահարութիւններդ ասո՞նք են:

— Այո՛, վերջը ի՞նչ պիտի ըլլայ եթէ չկարենաս զսպել զանոնք:

— Աւելի՛ աղէկ, անոնք կը կախեն Տորէնի պէս դժոխքի արժանաւոր երէն:

Այսպէս զրեթէ ժամ մը տեւց խօսակցութիւնը: Երբ վերջապէս Պելլըվիլ մեկնելու պատրաստուեցաւ՝ Ատրիէն հանդարտած էր բոլորովին:

— Ե՞րբ պատրաստ պիտի ըլլան այս ամէն բաները հարցուց ան:

— Ծո՛ւտ շո՛ւտ. վաղը չէ միւս օր:

— Բայց գլխատման օրն է այդ: Ինչո՞ւ վաղը չէ:

— Անկարելի է, պէտք է որ ես Սիմոնը տեսնեմ ամէն բան կարգի դնելու համար:

— Սիմոն, ո՞ր Սիմոնը:

— Սիմոն Կիյէն: Կուզ Սիմոնը:

— Ճիշդ է արդեօք ըսածնին:

— Ի՞նչ, ի՞նչ կայ, ըսէ՛ նայինք:

— Ի՞նչ. բայց....


— Ուրեմն ի՞նչ կայ... բայց:

— Միթէ Սիմոնը վարձուորդ է:

— Երբեմն: Ի՞նչ որ է, շուտով աչ-
քովդ պիտի տեսնես զանիկայ:

Նավրի բարեկամաբար սեղմեց Պելլըվի-
լին ձեռքը. չէր դադրեր շնորհակալ ըլլա-
լէ. աչքերը աւելի ոգևորուած կը փայլէին:

Հուսկ Պելլըվիլ իր բարեկամը ողջու-
նելով աներևութացաւ լռիկ և խորհրդա-
ւոր կերպով ինչպէս որ եկած էր:



ԳԼՈՒԽ Դ.

Յաջորդ օրը, Ատրիէն կարելի եղածին չափ բարեկամական մտերմութեամբ կը խօսակցէր գերազօր Տորէնի հետ, և սաստիկ զուարթութիւն կը կեղծէր:

Շնորհիւ Նավրիի և Պելլըվիի ծրագրին՝ Տորէն անտեղի բան մըն ալ չտեսաւ սպային այդ կերպերուն մէջ, միայն քանի մը ակնարկութիւններ ըրաւ անոր չափազանց զուարթութեանը համար:

Յետոյ խօսք բացուեցաւ տ'Ուպէն քաղաքացուհւոյն վրայօք: Երեսփոխանին ըրած դիտողութիւնները թեթեամիտ և նոյն իսկ գոհիկ էին: Սոսկումը, սէրը և մանաւանդ իր ընտրած կնոջ նկատմամբ ունեցած յարգանքը՝ Նավրին կը գրգռէին յարձակիլ ու այս եղեռնաւոր խռովածին վրայ՝ զայն խղդել և ուղեղը ցայտեցնել սենեկի պատերուն վրայ: Բայց խոհեմութիւնը և Պելլըվիին խորհուրդները՝ իր անհամբեր ձեռքերը կը կաշկանդէին: Ան ոչ մէկ խօսքով իր հոգւոյն խորքը չյայտնեց, ու կէսօրէն վերջ մեկնեցաւ Տորէնի քովէն: Զինուորական պարտքերը զինք ստիպեցին եր-

կայն ատեն բացակայ մնալ բնակարանէն.
Ժամը տաս էր երբ սենեակը մտաւ:

Նավրի ամբողջ գիշերը անկողնին մէջ
աստին անդին դառնալով անցուց: Եւ ար-
շալոյսէն քիչ առաջ ընկղմեցաւ ահռելի
երազներու մէջ: Ան Ռընէն կը տեսնէր
շղթայակապ իրեն հետ: Մի և նոյն կառ-
քով երկուքը միասին գլխատման գործի-
քին կ'երթային: Ժողովրդեան աղմուկ ու
աղաղակը կը խլացնէին անոր ականջները:
Իսկ Ռընէն՝ մերթ կ'երգէր ու մերթ կը ծի-
ծաղէր իր ընկերուհիներուն հետ: Յան-
կարծ Ատրիէն զանիկայ թողուց, այլ ևս
միասին չէր այդ եղեռնական սայլին մէջ,
ծիով կը հետևէր անոր: Անիկայ բան մը կը
հալածէր, բայց ինչ ըլլալը ինք ալ չէր
գիտեր: Կիւյօթինը կանգնած էր իրեն
առջև ամբողջ մարմնով: Ատրիէն դէպ ի
անոր կը յարձկի ձին յիմարաբար վա-
րելով ամբոխին վրայէն որ զինքը կ'ա-
նիծէր. կը հասնի գլխատման բեմին մօտ՝
մագաղաթ մը տատանելով օդոյ մէջ ու
պոռալով. յապաղում, յապաղում: Դա-
հիճը իրեն կը ծռի դժոխային ծիծաղով
մը: Ատրիէն կը ղիտէ մագաղաթը՝ որուն
ձևը փոխուած էր. այլ ևս շնորհը չէր
ձեռքին մէջ բռնածը, ալ արիւնաթաթաւ
գլուխ մը, Ռընէին գլուխը: Դահիճը կը

մեծնայ, կ'այլափոխի՝ Տորէնի դէմքը կը զգենու և ձեռքը կ'երկարէ դէպ ի Ատրիէն, անոր ուսը կը բռնէ, կը ցնցէ ուժգին՝ պոռալով.

— Քաղաքացի՛, ուշ մնացեր ես, ուշ:

Նավրի կ'արթննայ սարսափի աղաղակ մ'արձակելով: Պաղ քրտինքը կը վազէ ճակտէն ու դեռ կը զգայ դահճին ձեռքը իր ուսին վրայ ու կը լսէ դեռ այդ ձայնը, երազի ձայնը որ կը պոռար իրեն.

— Շատ ուշ, քաղաքացի. շատ ուշ:

Նավրի բացաւ աչքերը: Գարնանիօյ երգիչներու զգեստով, չարագործի դէմքով և հայրենասիրութիւն ցուցադրող Ժագոպեններու կարմիր գտակով մարդ մը ծռած էր դէպ ինք: Կապոյտ սպի մը կը ծածկէր անոր ձախ այտը: Զինքը աւելի տգեղցնելու համար կարծես՝ ահագին ուռեցք մը կը ցցուէր ուսերուն մէջտեղ ուր վիզը գրեթէ բոլորովին թաղուած էր. հասակը որ բնական կերպով հսկայի պէտք էր ըլլալ, ընդհակառակն զանիկայ միջահասակ կը ցուցնէր:

Ատրիէն շտկուեցաւ անկողնին մէջ:

— Ո՞վ ես դուն, գոչեց, ինք իրեն հարցնելով թէ իրօք արթնցած էր:

Կուզը Ատրիէնին ուսը թողլով.

— Ա՛հ, Խնչպէս ալ արթնցար. կեցցէ՛ բանականութեան աստուածունին:

— Ո՞վ ես, կրկնեց Ատրիէն:

Անծանօթը ետ քաշուեցաւ և անճոռնի գլուխը վեր վերցնելով՝ աւելցուց պարծե-
նալով.

— Հայրենակից մը, հասարակապետա-
կան մը, ազատ մարդ մըն եմ:

— Սատանային ծոցը գլորիս քու տիտ-
ղոսներովդ, անո՛ւնդ ըսէ՛, անո՛ւնդ:

— Իմ անունս՝ կ'երաշխաւորեմ որ
քուկինէդ աւելի պարզ և ծանօթ է: Եթէ
ես տը Նավրի կոչուէի, ըսաւ, ուժով մը
շեշտելով տըին վրայ, պէտք էր կամ
անունս փոխել և կամ ազնուապետական-
ներու շատ ծանօթ ճամբայ մը բռնել ա-
մէն առաւօտ: Այս բառը շատ ուժով կը
հնչէ, կը յիշեցնէ բռնաւորը, և վերջա-
պէս ինծի նման հայրենասէրներուն ա-
կանջին գէշ կը զարնէ: Ո՞վ երիտասարդ,
իմ խորհուրդիս հետեւէ, և փոխէ այս բո-
ւորը:

Ատրիէն ապշած կը նայէր:

— Ազատութեան վարդապետութիւն-
ները քեզի լաւագոյն քաղաքավարութիւն
մը չե՞ն սորվեցուցած, դո՛ւ, դո՛ւ ըսելէն զատ
քեզմէ բարձր աստիճանաւորներուն:

— Ա՛հ, յանուն այդ աստուածութեան,
որ բանականութեան աստուածունիէն ա-
ռաջ գոյութիւն ունէր, ո՞վ կը համարձակի

եղբայրութեան այս պանծալի օրերուն մէջ մեծաւորնեքու վրայօք խօսելու: Երիտա- սարդ, դուն յիմար ես.... բայց ի՞նչ կ'ը- սեմ.... ի՞նչ բան կարելի է յուսալ ազ- նուապետականի մը որդիէն:

Ատրիէն լաւ հասկցաւ որ սխալած էր:

— Դուն իմ միտքս չես հասկնար պա- տասխանեց ան. ես աս ըսել չեմ ուզեր: Քաղաքացի՛, ամէնքնիս ալ հաւասար ենք, բայց ես քաղաքացի է մ'աւելի եմ.... Միթէ զինուոր մը, սպայ մը չեմ:

— Լա՛ւ, ի՞նչ բանի կու գան ասոնք: Ուրեմն, անոնց համար պէ՛տք է որ ես զքեզ կոչեմ՝ Տէր, կամ Ձեր Մեծափա- ոութիւնը և կամ....

— Կը բաւէ շատախօսութիւնդ Պարոն Կուզ, գոչեց Նավրի, համբերութիւնը հա- տած: Հասկցանք, հասկցանք, անունդ ըսէ՛:

— Անո՛նս. Պարոն Կուզ, բացազան- չեց հայրենասէրը հտպտանօք, և այն ատեն մինչև գետին խոնարհելով Ատրիէ- նին առջև, ծաղրական հանդարտութեամբ մ'ըսաւ.

— Ես ի՞նչպէս կը կուչուիմ. Ձեր Ազ- նուութիւնը գիտցած ըլլայ որ ես միշտ առանձին ըլլալովս երբեք հարկ չեմ ու- նեցած անունս տալու. բայց թէ որ Ձեր

Արքայական Վեհութիւնը ինձ պատիւ կը շնորհէ ձեզ ծանուցանելու թէ ուրիշները ինչպէս կը կոչեն զիս, կրնամ պատասխանել Ձեր Ամենագնիւ Վեհութեան թէ՛ երբ ինձ պէտք մ'ունենան Սիմոն Կիյէ կը կոչեն, իսկ բացակայութեանս ատեն Կուզ Սիմոն կ'անուանեն:

Ատրիէնի բարկութիւնը և այս այցելուին մտաւոր վիճակին վրայօք՝ ունեցած կասկածները ամենամեծ ուրախութեան փոխուեցան:

— Դո՛ւն, Սիմոն Կիյէ՞ն. բայց ինչո՞ւ առաջուց չըսիր:

Եւ անոր առանց ժամանակ տալու որ պատասխանէ աւելցուց.

— Ի՞նչ լուր կայ: Քեզ Պէլլըվիլ քաղաքացի՞ն ղրկեց: Ինքն ո՞ւր է, ինչո՞ւ համար չեկաւ:

— Դեռ ո՞րչափ հարցումներ պիտի ընես մէկ շունչով. անիծուած... եթէ դեռ շատ պիտի երկնցնես, ինձ կը թուի որ կրնամ երթալ շրջան մ'ընել ու դառնալ մինչև որ պատրաստ ըլլաս ինծի մտիկ ընելու:

— Օ՛ն, մի՛ վշտանար, բարի Սիմոն, ըսաւ Ատրիէն ժպտելով մը՝ հակառակ կսկիծներուն: Շուտ, պատասխան տո՛ւր, ո՞ւր է Պէլլըվիլ:

— Ինքը զիս ղրկեց քեզի հետ ծանօթանալու համար, որպէս զի երբ ամբօխին մէջ իրարու հանդիպինք՝ կարենանք զիրար ճանչնալ։ Ինծի յանձնեց որ յորդորեմ քեզ՝ հանդարտ և պաղարին ըլլալու, մանաւանդ Տորէնին հետ։

— Աւելորդ նախազգուշութիւն, ըսաւ Ատրիէն խրոխտ կերպով մը։

— Նոյն իսկ քեզմէ քաջերն ալ կորսուած են այս թերութեամբ։

— Բոլորը մօ է, ուրիշ յանձնարարութիւն չունիս։

— Այո՛ ունիմ, շատ հաւանական է որ Տորէն կէսօրուան դէմ դարձեալ բանտը այցելէ ու վերջին փորձ մըն ալ ընէ տ'Ուպէն քաղաքացունին որսալու համար, և ետքը տունը դառնայ։ Պէտք է որ ժամը մէկին դուն հոն գտնուիս ամէն բան պատրաստ պիտի ըլլայ։

— Ապահով եղիր։

— Այն ատեն՝ ըսաւ Սիմոնը ոտք ելլելով, քեզ հետ գործերնիս լմնցաւ։ Քաղաքացի, թոյլ տուր որ այլ ևս երթամ։

— Ինչ, այդքան շո՞ւտ։

— Շո՞ւտ է կ'ըսես. պէտք է որ մարդիկս տեսնեմ ու վերջին հրամաններս տամ. ժամը եօթն է։

— Եօթն է ինչ կ'ըսես։

— Այո՛, կարծես թէ ժամանակը կը կենայ մինչդեռ դու կը քնանաս, կ'երագես յապաղման կամ ուրիշ բաներուն վրայօք։ այլ ևս ո՛չ դուն և ոչ ալ ես ժամանակ չունինք կորսնցնելու։ Քեզի բարի առաւօտ մը և նոյնպիսի բարի երեկոյ մըն կը մաղթեմ։

— Չեմ գիտեր ինչպէս քեզ շնորհակալ ըլլամ, ըսաւ Ատրիէն։ Եւ չեմ հասկընար թէ ինչո՞ւ ինձ օգնել կ'ուզես։

— Այս բանիս վրայ բնաւ մի՛ խօսիր, պատասխանեց Սիմոն՝ Ատրիէնի ձեռքը սեղմելով զոր իրեն կ'երկնցնէր։ Օր մը, եթէ մեր գործը յաջողցնենք, ինչպէս որ կը յուսամ, թերեւս կ'ըսեմ քեզ իմ գաղտնիքս։

— Աստուած հետդ ըլլայ, Սիմոն։

Կիյէն յառաջեց դէպ ի դուռ և սեմին վրայ կենալով։

— Թէ որ կ'ուզես զիս վարձատրել ժամանակին, կրնաս....

— Ըսէ՛, ըսէ՛, պուռաց Ատրիէն վառանմամբ։

— Կրնաս.... վերցնելով իմ կուզուած թիւնս։

Կուզը հեռացաւ և մինչդեռ սանդուխին վրայ էր, Նավրի լսեց անոր բարձրաձայն բրբջալիւր ծիծաղիւր։

ԳԼՈՒԽ Ե.

Կէսօրուան դէմ Տորէն ուղղուեցաւ դէպ ի Ռընէին բանտը. անմիջապէս մտցուեցաւ խցիկին մէջ: Այցելութեան պատճառը աս էր. կը յուսար որ աղետալի ժամուն մօտենալը թերեւ նպաստաւոր փոփոխութիւն մը բերած ըլլար օրիորդի մտքին մէջ: Ներս մտաւ՝ վստահ իր յաղթանակին վրայ: Սակայն նաեւ մեծ եղաւ զարմանքը՝ երբ տեսաւ որ դարձեալ մերժուեցան իր ըրած շնորհները և օրիորդը անընկճելի և զոռոզ փնաց մահուան առջև:

— Ուրեմն չե՞ս վախնար կառափնատէն:

— Թերեւ վախնամ, բայց այս երկու չարիքներէն փոքրագոյնը ընտրեցի, պատասխանեց Ռընէ, կը նախընտրեմ կառափնատը քան քեզ:

— Անիծուած. մոռնէց Տորէն զայրոյթէն գունատած. դահիճը իբր պատուոյ օրիորդ մը քիչ անճարակ, և կիւյօթինի տախտակամածը իբր հարսանեկան անկողին բաւական խիստ պիտի գտնես:

Տորէն զուռը հտեէն ուժով մը գոցելով

մեկնեցաւ անկից: Ան արագ, ամուր և
զրգուած քայլերով կ'երթար: Սիմոն՝ որ
արդէն իր մարդիկը զետեղած էր հրա-
պարակին մէջ, անոր գալը տեսնելով ժպ-
տեցաւ: Յառաջեց դէպ ի ան, ճամբան
կտրեց առջևէն անցնելով և արմուկովը
անոր զարնուեցաւ՝ այնպիսի սաստկու-
թեամբ որ՝ քիչ մնաց երեսփոխանը գե-
տին գլտորէր:

Տորէն շուտով վեր կանգնեցաւ փնտռե-
լով զինքը հրմշտկողը: Այս ցնցոտի մար-
դուն կերպարանքը, հանդարտութիւնը և
անհոգ կերպը երեսփոխանը զայրացու-
ցին: Յարձրկեցաւ անոր վրայ և առանց
բառ մ'ըսելու ուժգին բռնցի մ'իջեցուց
երեսին:

— Անպիտան շուն, գոչեց կուզը, դուն
ո՞վ ես որ քայլերս քեզի տեղիք տան:

— Ես ո՞վ եմ:

— Միթէ հաւասարակիցդ չեմ:

— Էհէ՛. ի՞նչպէս երեսփոխան մը հա-
ւասար ըլլայ քեզի պէս չուառականին.
կորսուէ՛ եթէ չես ուզեր որ զքեզ ջախ-
ջախեմ. կորի՛ր, գործ չունիմ քեզի հետ:
Նոյն պահուն խառնիճադանճ խուժանը
շրջապատեր էր զանոնք: Սիմոնին մար-
դիկը հոն էին: Երբ Տորէն այսպիսի ամ-
բարտաւանութեամբ պատասխանեց, կա-

տաղի մոնչիւն մը փրթաւ անոնց մէջ։
Տորէն այն ատեն միայն տեսաւ զիրենք,
բայց, շատ ուշ։

— Քաղաքացի գրկէ՛ զիս, պոռաց
Սիմոն։

Եւ մինչդեռ դէպ ի ան կը յառա-
ջէր, Տորէն քստմնած ետ ետ քաշուելով։

— Կորի՛ր թշուառական, եթէ ոչ սրովս
քեզ կը ջախջախեմ։

Աս ըսելով ձեռքը կողին տարաւ և
տեսնելով որ Կուզը միշտ կը մօտենար,
մերկացուց սուրը։

— Տեսէ՛ք սա ազնուապետականը, հայ-
րենասիրի մը բարեկամական գրկախառ-
նումը բռնութեամբ կը մերժէ։

Սիմոնը կեցած էր և ամբոխը կը շըր-
ջապատէր երկուքն ալ։

— Ի մահ ազնուապետականը, ի մահ
բռնաւորը, կախուի անօրէնը՝ կը պոռային
ամէն կողմէն։

Տորէն տեղը անշարժ մնաց՝ սարսափէն
շփոթած և ահաբեկած։ Խուժանին մէջէն
յանգնագոյններէն մէկը փայտով խթելով
երեսփոխանի կոնակին՝ ըսաւ սպառնալից։

— Սուրդ յանձնէ, սիրելի ազնուապե-
տականս, եթէ չես ուզեր որ խորտակուի։

Այս վերջին նախատինքով դեռ աւելի
կատղած, երեսփոխանը առանց ըրածին

հետևանքը մտածելու՝ սրոյ հարուածով մը նախատողին պատասխանեց։ Սուրին ծայրը դպաւ մարդուն երեսը և վէրքէն արեան գիծ մը դուրս ցայտեց։ Ասով ամբողջը աւելի ևս զայրացած յարձակեցաւ Տորէնի վրայ։ Կռիւր դժուարակնճիռն զիրք մ'առաւ երեսփոխանին համար։ Սիմոն նավթիին խոստացեր էր՝ Տորէնը բերել իր բնակարանը և ժամանակն էր։

— Բարեկամներ, զայն ինծի թողուցէք, պոռաց Կուզը, տեղիք տուէք մեզի, իրեն պիտի ցուցնեմ որ այսօր իր վարպետը գտաւ։

Ու շուտով լայն դանակ մը քաշելով գօտիէն յարձակեցաւ Տորէնի վրայ։ Երկու զէնքերն ալ փայլատակեցին երբ իրարու հանդիպեցան, և կայծեր փրթան պողպատէն։ Վայրկեան մը դանակը կպած կը թուէր երեսփոխանի սուրին. երկու մարդիկ կը ճգնէին փոխադարձ իրենց ուժը ցուցնել։ Յետոյ իրարու յաջորդեցին երկայն շարք մը սրախաղական շարժումներով՝ զիրար հարուածելու համար և աշխոյժ քայլափոխի, որով Կուզին նպատակն էր Տորէնը իր զիրքէն խախտել։

Քաջալերութեան ազադակ մը փրթաւ ամբոխէն յանուն Սիմոնի։ Ծաղրածուութեանց երկայն գոռում գոչումը կ'ողջու-

նէին Տորէնի ամէն մի քայլը: Վերջապէս, Սիմոն յաջողեցաւ ոսոխը մէկդի քաշել պատէն, ուր որ կռթնած էր: Դանակին ճարտար շարժումներով՝ Սիմոն կը ցուցնէր որ իզուր չէր պարծեցած Տորէնին հաւասար ըլլալու: Երեսփոխանը ըստ ինքեան վախկոտին մէկն էր: Մինչև այն ատեն զինաշարժութեան մրցումը միայն զայրոյթէն մղուած կ'ընէր. կուզին ճարպիկութիւնը զինքը կը գերազանցէր ու կը սարսափեցնէր: Կայ բնական զգացում մը և տեսակ մը մագնիսացում՝ որ կռուողներուն կ'ազդէ այն ատեն երբ թշնամին վհատած է:

Տորէն հազիւ թէ իր տկարութիւնը ըմբռնեց, Սիմոն իր առաւելութիւնը զգաց և ըստ այնմ գործածեց զայն: Երեսփոխանը այն ատեն յուսահատաբար սկսաւ կռուիլ: Ան բոլոր ծանրութեամբը և բոլոր ուժովը կը կշռէր հարուածները՝ գործը շուտով լնցնելու համար. Սիմոն ճարտարութեամբ խոյս կու տար, և Տորէն որ և է դիմադրութեան չհանդիպելով կը կորսնցնէր հաւասարակշռութիւնը և կը տատանէր յառաջ: Կուզը իր հարուածները կ'ուղղէր ճիշտ անոր երեսը և անոր աչքերուն կը սպառնար այնպիսի արագ խաղերով որ երեսփոխանը չէր կրնար հե-

տեիլ դանակի շարժումներուն։ Բնագղմամբ
զէնքը կը վերցնէր և կը զգուշանար հա-
րուածներէն. բայց անոնք այնքան խիտ
կը տեղային որ իրեն ժամանակ չէին թո-
ղուր յարձակողական դիրք մը բռնելու։
Սիմոն՝ երեսփոխանին վրայ այսպէս զօ-
րանալէն վերջը հետզհետէ արագութեամբ
կը յառաջանար։ Տորէն իւրաքանչիւր հա-
րուածին քայլ մը կ'ընկրկէր, կը լսէր
միշտ սպառնացող երկաթին ձախորդ շկա-
հիւնը։ Բարկութիւնը իջաւ։ Մտածութիւն
մը միայն զինք կը խռովէր, ան կը զգար
ուժին նուազիլը։ Վայրկեանէ վայրկեան
իւր զողողուն ձեռքը՝ կրնար իյնալ սոս-
կալի կուզին հարուածներուն տակ։ Այ-
տեւրը գունատեցան. ան մերթ ընդ մերթ
կիսաբաց բերնէն խուլ հառաչներ կ'ար-
ձակէր, և քայլ առ քայլ տեղիք կու տար
այս զոխային մարդուն առջևէն՝ որ շա-
րունակ զինք կը բռնէր։

Վերջապէս նահանջը կը վերջանայ, տե-
ղիք կուտայ փախուստի, փախուստ մը
յանկարծական դէպ ի ետ՝ զինք ազատելու
համար՝ դեռ աւելի սաստկացած հարուած-
ներէն։ Ո՛հ, եթէ կարենար անգամ մը
ձեռք ձգել իր բնակարանին դուռը։ Ազա-
տելու քանի մը քայլ միայն կը պակսէր
անոր։ Սակայն որքան ան ետ կը նա-

հանջէր, այնքան աւելի կուզը կատղած
անոր վրայ կը յարձակէր։ Տորէն մտքէն
Աստուծոյ աղօթք մը մըմնջեց որպէս զի
դուռը բաց գտնէր, ուր վերջապէս հասաւ։
Ձեռք մը երկնցաւ կիսաբաց դռնէն և
երեսփոխանին կռնակէն բռնելով՝ ուժգին
ներս քաշեց զայն։ Ծանր դուռը ճռնչեց։
Երեսփոխանը ազատած էր։ Այն ատեն
կուզը դանակը պատեանը դնելով դար-
ձաւ իրեններէն մէկուն, ըսաւ.

— Նավրիին իմացու՛ր, շուտով գայ։
Երիտասարդը վազելով աներևութա-
ցաւ։

ԳԼՈՒԽ 2.

Տորէն, առանց բան մ'ըսելու Վիլէտին որ զինք ճիշդ ժամանակին ազատեց, և այլ ևս վախը փարատած ինքզինք ապահով տեսնելով, սկսաւ նախատանաց հեղեղ մը թափել Սիմոնին դէմ: Վազելով մագլցեցաւ սանդուխն ի վեր ու նետեց զինք իր սենեկին մէջ: Դրաւ սեղանին վրայ իր սուրը որ շատ տեղ ընդունած հարուած ներուն հետքերը կը կրէր. մէջքէն զոյգ մը ատրճանակ հանեց և զետեղեց անոր քով: Յետոյ զլիարկը անկիւն մը նետեց և ինկաւ աթոռի մը վրայ ճակտին քրտինքը չորցնելով: Նոյն պահուն ամբոխը ահաւոր կերպով բազմանալով կը կանչուր ռուտէր.

— Կանթեղին. մեռնի՛ բռնաւորը:

Տորէն ոտք ելաւ, վանդակին մէջ գոցուած վագրի պէս վեր վար կը քալէր մտիկ ընելով դուրսի գոռում գոչումը:

Յանկարծ ապակիներու շառաչ մը լըսուեցաւ: Զօրեղ բազկէ մը նետուած մեծղի քար մը սուլելով պատուհանէն անցաւ:

Երեսփոխանը սարսափահար դէպ ի դուռը վազեց պոռալով.

— Վիլէտ. Վիլէտ. գետին անցնիս, անասուն, ինչո՞ւ կը վախես:

Սենեկին մէջ նետուած ուրիշ քար մը քիչ մնաց պիտի հարուածէր խեղճ ծառան, որ սարսափէն բոլորովին զոյնը նետած՝ ներս եկաւ. Տորէն հրամայեց անոր շուտով փեղկերը գոցել:

Վիլէտ ահամայ հնազանդեցաւ.

— Գնա՛, դո՛ւրս ելիր այլ ևս. բայց նայէ որ բոլոր դռները ուժով գոցուած ըլլան:

Վիլէտ մեկնեցաւ:

Քիչ մը ժամանակ Տորէն մութի մէջ նստած մնաց. խռովութեան վերջանալուն կը սպասէր:

Ան, յանկարծ դուրսէն ուրախութեան երկայն աղաղակ մը լսեց: Հակառակ իր հետաքրքրութեանը չհամարձակեցաւ պատուհանը բանալ: Եւ յետոյ ոտքի ձայներ լսուեցան սանդուխին վրայ. վեր կու գային: Տորէն ձեռքն առաւ ասորճանակին մէկը մինչդեռ դուռը բացուելու վրայ էր, պողաց բոլոր ուժովը.

— Եթէ քայլ մըն ալ ընես կը հարուածեմ:

— Ինչ ազնիւ, եռանդուն ընդունելութիւն բարեկամի մը համար, պատասխանեց շատ ծանօթ ձայն մը:

— Ահ, դ՞ուռն ես Նավըրի.... Շուտ ըրէ, շո՛ւտ զինուորնեքը, զինուորնեքդ կանչէ... ամէնքն ալ....

— Էհ, ի՞նչ կայ, ապստամբութիւն. համբերէ՛, փողոցը զատարկուելու վրայ է.... Ինչո՞ւ բռնութեան ձեռք զարնել, և միանգամայն խոհեմութիւն չէ, վերջը ամբոխը կը կատղի:

— Ուրեմն մինչև որ այս ուամիկ բազմութիւնը քաշուի՝ ես հոս բանտուամբ պիտի մնամ:

— Ո՛չ երբեք. կարծեմ համոզելը աւելի օգտակար պիտի ըլլայ քան բռնութիւնը:

— Համոզել.... Էհ, շատ աղէկ.... համոզէ նայիմ զանոնք: Արիութիւն կը մաղթեմ. բայց ես չեմ խառնուիր եթէ քարի հարուած մը խօսքերդ կտրէ:

Ամբոխը՝ որ քանի մը վայրկեան հանդարտած էր, երկայն աղաղակ մը բոցուց:

— Ինչո՞ւ կը պոռան այդ սատանաները, մռնչեց Տորէն:

Նավըրի մօտեցաւ պատուհանին և կամացուկ մը փեղկը կէս բանալով՝ դուրսը նայեցաւ: Աչքին զարնող տեսարանը զինք վերջին աստիճանի յուզեց, բայց գրեթէ պաղարիւնութեան հրաշքով մը կըցաւ անտարբեր երևնալ: Դատապարտուածներու սայլը՝ որ կառափնատ պիտի երթար,

կեցած էր Տորէնի դրան առջև... Որչափ որ կարելի էր դասել անոնց գոռում գոչումէն, սրիկաները կը պահանջէին որ երեսփոխանը սայլին մէջ նետուի: Տորէնին գոյնը նետեց, շրթունքները դեղնեցան:

— Սայլին հետևող այդ քանի մը զինուորները չե՞ն ուզեր ուրեմն գէնքերնին գործածել, ըսաւ ան:

Ատրիէն անոր ըսածը չլսեց: Իր ուշադրութիւնը կը գրաւէր միայն նանկամարդ աղջիկը՝ զոր դատապարտութենէն ունէջ տեսած էր:

Հուսկ դառնալով Տորէնի.

— Քաղաքացի՛, կը լսե՞ս, ըսաւ, ամբոխը ցուցնելով:

— Այո՛, Նաւրի, բայց խնդրեմ գնա՛ զինուորներդ շուտ բեր, եթէ զիս ազատես, վստահ եղիր վրաս, զիտեմ լաւ վարձատրել զքեզ:

— Ուզածէդ աւելին, թէ որ....

— Ըսէ՛, ի՞նչ կ'ուզես.... զօրավարութեան աստիճան:

— Մտիկ ըրէ՛, քաղաքացի: Այս ամբոխին գլուխն է սրիկայ մը կիյէ անունով, կուզ մը որ ռամկին վրայ ամենամեծ ազդեցութիւն ունի, անոր մէկ քանի խօսքը, և քու բուռ մը ոսկիդ, կարող են շուտով

զանոնք ցրուել ինչպէս քամին տերեւները։
Հիմայ, Կիյէն ինծի պարտք մ'ունի անոր
ըրած քանի մը նպաստներու համար.
մէկ խօսքով կրնամ հրաշք գործել։

— Ահ, սիրելի Նավրի, գնա՛, վայր-
կեան մըն ալ մի՛ կորսնցըներ։ Գնա՛, խօսէ
Կիյէին հետ։

— Համբերէ վայրկեան մը, ուզածդ
կ'ընեմ, բայց պայմանաւ մը։

— Կը շնորհեմ ինչ որ ուզես. միայն
թէ այս ամբոխը հեռացուր ասկից և եկուր։

— Չեմ կրնար սպասել. վայրկեանի
մէջ կրնաս ընել ուզածս։ Շնորհ կը
խնդրեմ մէկու մը համար զոր սայլին մէջ
կը տեսնեմ։

Տորէն գրիչը ձեռքն առաւ. գրպանէն
հանեց արդէն իսկ պատրաստուած թուղթ
մը՝ զոր նոյն առտու Ռընէին համար գրած
էր, ստորագրեց ու յետոյ Ատրիէնի դառ-
նալով.

— Անունը ի՞նչ է։

— Ռընէ տ'Օպէն։

Տորէն ապշած գրիչը մէկդի նետեց։

— Երբեք, պոռաք ան. ի՞նչ բանի
համար։

— Վասն զի նշանածս է։

— Ստախօս, ի՞նչպէս կրնայ ըլլալ.
շաբաթ մ'առաջ կ'ըսէիր թէ զինք չես

ճանչնար: Դեռ երէկ՝ ինձ հետ կը խընտայիր անոր վրայ: Անպիտան, դուրս ելիր ասկից:

— Շատ լաւ, ուզածիդ պէս. անիմադ գլխուդ վրայ ըլլայ:

Ատրիէն ուսը ցնցելով ուղղուեցաւ դէպ ի դուռը:

— Գիտցած ըլլաս, քաղաքացի, ըսաւ դառնալով, տուած մէկ նշանս կարող է զքեզ ազատել և մէկ խօսքս՝ զքեզ կորսնցնել: Եթէ վայրկեան մը մարմինդ տատանի կախաղանին վրայ, գիտցիր որ մի միակ պատճառը՝ քու այս մերժումդ է:

Տորէն խածաւ շրթունքները, ձեռքը ջղաձգութեամբ սղմեց ատրճանակին կոթը:

— Իզո՛ւր, սիրելի Տորէն, ըսաւ Ատրիէն՝ այս շարժումը տեսնելով. քու բնականինդ վրայ յարձկելու նշանը ատրճանակի հարուած մըն է. ուստի, եթէ ուզես ձեռքովդ կու տաս այդ նշանը և....

Տորէն յանկարծ վեր ցատկեց.

— Ըսել է որ դաւաճան մըն ես դուն:

— Թերեւս.... քեզի վերջնական կերպով կ'իմացնեմ, որովհետեւ այս ամէնը ես առաջուց գուշակեր էի, յանձնեցի կիլէին ատրճանակի առաջին հարուածին դուռը խորտակել. այնու հանդերձ նորէն նոյնը պիտի կատարուի եթէ մէկ քարորդ ժամէն ասկից դուրս չելլեմ:

Կատաղի մոնչիւն մը փախաւ Տորէնի շրթունքներէն։ Անիկայ երդուընցած էր որ Նավրին ողջ պիտի չելլէր անկից։ Խաբուած ըլլալը լաւ կը հասկնար։

— Ուրեմն կը զրկեն զիս քաղաքացի, հարցուց Նավրի, աճապարելով գործը շուտով լմնցնելու։

Տորէն չպատասխանեց։ Ժողովրդեան աղաղակը կը սաստկանար։ Դուռը խորտակուելու վրայ էր հարուածներու սաստկութենէն։ Վերջապէս երեսփոխանը պատուհանին մօտենալով ականարկ մը նետեց դուրսը։

Հնորհման թուղթը բոլորովին պատրաստ կը կենար գրասեղանին վրայ, Ատրիէն զայն առաւ։

— Սայլը ճամբան կը շարունակէ, ըսաւ Տորէն. շնորհը այլ ևս ի զուր է։ Ամբոխը կը ցրուի։... Կրնամ այլ ևս դուրս ելլել, Ռընէ տ'Օպէնի գլխին իյնալը կ'ուզեմ տեսնել։

Ան սաստկութեամբ գոցուող դրան աղմուկէն ետե դարձաւ։

Տորէն ուշ անդրադարձաւ իր շուրջը անցած դարձածը։ Վազեց որ բանալին առնէ, ի զո՛ւր. սողնակը ճոնչեց կղպակին մէջ։ Այլ ևս իր սենեկին մէջ բանտուած էր։ Իսկ նախասենեկին մէջ Նավրի յարձակեցաւ։

սարսափած Վիլէտին վրայ, բռնադատեց զայն՝ գտնել կրցած կահ կարասիքը դիզել դրան մուտքին վրայ:

Երբ այս գործողութիւնը լմնցաւ, Նավ-րի ծառան ուժով ուժով կապեց սեան մը իր սուրին տոկովը. յետոյ առանց հոգ ընելու իր զէնքին վրայ, երեք չորս ցատկելով սանդուխներէն՝ ինք զինքը դուրս նետեց: Կիյէն աներևութացած էր: Ամբոխը՝ զոր այլ ևս արգիլող մը չկար գրոհ տուաւ երեսփոխանին տունը վայրենի գազաններու նման մոնչելով:

— Ո՛ւր է Կիյէն, հարցուց Ատրիէն իր ձին բռնողին.

— Սայլին ետեւէն՝ Հասարակապետութեան հրապարակը մեկնեցաւ:

Ատրիէն ցատկեց թամբին վրայ և մինչդեռ սրաթռիչ կ'ընթանար, տեսաւ Կուզը իր ձիուն վրայ որ դէպ իրեն կը վազէր:

— Շնորհը յաջողցուցի՛ր, Սիմոնը հեռուէն պոռաց Նավրին տեսնելով:

— Այո՛, այո՛:

— Օ՛ն, շուտ ուրեմն.... յառաջ, գըլխատումը սկսած է.... Թերևս զեռ ժամանակ ունենանք:

Սըընթաց անցան Ազգային փողոցը: Մարա փողոցին մէջ խիստ ամբոխը կ'արգիլէր անոնց առաջ երթալը. և նոյն

իսկ վայրկեան մը զիրենք շրջապատուած տեսան արիւնկզակ խուճբերէ և մանաւանդ դժոխադէմ կիներէ որոնք կը սպառնային: Յուզմունքը կը բզքտէր Ատրիէնի սիրտը:

— Ատրճանակ մ'ունիս, պոռաց կիյէն:

Ատրիէն բան չէր լսած, և արդէն իսկ իր ձին քշած էր ամբոխի առաջին գծին վրայ: Ան կ'անցնէր վերաւորուածներու ցաւագին ճիչերու և անէծքներու մէջէն: Սիմոն անոր հետեւեցաւ զինք սլաշտպանելու համար:

Հասարակապետութեան հրապարակին մէկ կողմէն իյնող կառափնատին ահաւոր շաշիւնը լսուեցաւ:

Ատրիէն սարսռաց:

— Ահ, թէ որ աս էր Ռընէին գլուխը.... Յառաջ Սիմոն.... յառաջ:

Ան կօշկին խթանը մխելով ձիու կողքին՝ զիմեց կառափնատին ոտքը:

— Շնորհ մը. շնորհ մը:

Այս խօսքերուս իբրեւ պատասխան, դարձաւ դահիճը և սակառին մէջէն առնելով՝ դեռ դողդոջուն՝ կնոջ արիւնոտ գլուխ մը ներկայացուց ոռնացող ամբոխին, որ հետ գհետէ կը սեղմուէր կիջօրիւնին չորս կողմը: Ատրիէնին աչքերը այս տխուր առարկային վրայ ինկան: Ան սարսափած դար-

ձուց երեսը և ձեռքերուն մէջ ծածկեց՝
 իրրև թէ զարհուրելի ցնորք մը վռնտէր։
 Թուղթը ձեռքէն սահեցաւ և շրթունքէն
 յուստահատական աղաղակ մը ժայթկեց,
 որ ընկղմեցաւ ժողովրդեան «Կեցցէ՛ Հա-
 սարակապետութիւն» գոռում գոչումին
 մէջ։

Նավրի կատաղութենէն յիմարած թու-
 դուց սանձը ձիուն որ կայծակի նման
 զինք քշեց տարաւ ամբոխէն դուրս և այս
 սարսափելի տեսարանէն հեռու։

ԳԼՈՒԽ Է.

Նավրի բոլորովին խուլ իր շուրջը ան-
ցածներուն՝ սրարշաւ կը վազէ փողոցնե-
րու մէջէն: Տորէնի բնակարանին առջևէն
կ'անցնի՝ առանց իսկ տեսնելու երեսփո-
խանին մարմինը, որ կը տատանէր ցայգա-
լապտերին վրայէն և սրիկաներու ամբոխը
որ այս գարշելի մնացորդը կը շրջապա-
տէին:

Ան կ'ուզէր աւելի շուտ հեռանալ այս
դժոխքէն: Պահանորդ զինուորը զանիկայ
առանց գլխարկի և նշանազգեստը բացուած
տեսնելով, կ'ուզէր խափանել անոր ճամ-
բան: Նավրի ուղղեց ատրճանակը, մարդը
տեղիք տուաւ: Ան քառատրոփ կ'ընթանար,
միշտ կը սուրար փոշիոտ ճամբայէն առանց
հոգ ընելու շնչասպառ ձիուն, առանց
մտածելու և գիտնալու թէ ո՛ւր կ'երթար:
Իրեն հետևող ձիաւորի մը դոփիւնը և
իրեն «կեցի՛ր, կեցի՛ր» պոռացող մարդու
մը ձայնը յուշքը տեղը բերին: Ան ետև
դարձաւ՝ թամբին վրայէն նայեցաւ դէպ
ի ձայնին եկած կողմը առանց ընթացքը
նուազեցնելու: Չին գետին ինկաւ. Նավրի

ճամբան արգիլող ցանկը անցաւ ձին ծաղկաւէտ մարգագետնի մը վրայ թողուց որ ուզածին պէս թափառի:

Հոն գրեթէ քառորդ ժամ մը նստած մնաց՝ շնչասպառ, գունատ, աչքերը արիւնալից: Ամէն բան կ'անիծէր, նախ ինք զինքը, Յեղափոխութիւնը, Սարսափն ու Տորէնը:

Ի՞նչ հեռուէն լսուեցաւ ձիարշաւ հեծեալի մը դոփիւն ու դրնդիւնը: Նավրի ոտք ելաւ:

— Կու գան. անշուշտ Կիյէն ու Պելլըվիլը պիտի ըլլան, կ'ուզեն ձեռքս կասեցնել: Աւաղ, շատ ուշ պիտի հասնիք: Ռընէ՛, կու գամ զքեզ գտնելու:

Ան ձեռքը մէջքին տարաւ: Ի զո՛ւր. ատրճանակը պարապ էի: Եւ յիշելով որ զայն արձկած էր.

— Պէտք էի անասունին խնայել և շուտով ինքզինքս սպաննել: Սակայն, ի՛նչ հոգ, կապար եղեր է, պողպատ եղեր է.... Երկինք, ո՛ւր է սուրս:

Ջայն երեսփոխանին տունը ձգած էր:

Չիաւորները կը մօտենային: Նավրի ուզեց փախչիլ.... ու վազելով ձիուն քով բռնեց երասանակը և երբ թամբին վրայ պիտի ցատկէր, շատ մօտէն ձայն մը զինք ստիպեց ետև դառնալ: Երիտասարդը չէր

հաւատար աչքին ներկայացող իրականութեան... Ձիաւորը՝ հետը միասին կին մը՝ մօտեցաւ անոր. Սիմոն և Ռընէ՝ Ատրիէնի առջևն էին:

Նաւլրի խօսիւ կ'ուզէր, բայց շրթունքները չկրցան խօսք մըն ալ արտաբերել:

Ռընէ աշխուժութեամբ գետին ցատկելով վազեց դէպ ի երիտասարդը:

— Ատրիէն, Ատրիէն, ես ազատեցայ:

Ատրիէն զայն չէր լսէր. սարսափը, յուզումը զինք ընկճած էր. անշնչացած գետին ինկաւ իր նշանածին ոտքերուն առջև:

Նուազումը երկայն չտեւեց:

Քանի մը խօսքով Սիմոն եղածը անոր հասկցուց:

— Ես քեզի պողացի որ կենաս: Եթէ ինձ հնազանդէիր մեզի ալ այսչափ նեղութիւն պիտի չպատճառէիր: Ինչ և իցէ, աղէկ որ թուղթը գետին ձգեցիր, ապա թէ ոչ, առանց անոր ամէն բան ոչնչացած էր հիմայ:

Երկու շաբաթ վերջը երեքը միասին Գերմանիա կը գտնուէին պանդոկի մը մէջ: Ռընէ և Ատրիէն նստած էին սեղանի մ'առջև: Իրենց փոշիոտ զգեստներէն յայտնի կը տեսնուէր որ դեռ նոր հասած

էին: Անոնք երկուքն ալ կ'արտասուէին և կ'ուրախանային անցած վտանգները մտածելով:

— Սիմոնը ինչո՞ւ համար այսչափ կ'ուշանայ, ըսաւ Նավրի ոտք ելլելով:

— Հիմայ կու գայ, պատասխանեց Ռընէ. խեղճ ձիերը մեզմէ աւելի հանգըստեան պէտք ունէին, շատ դժուարին էր անոնց կատարած գործը. մեր ազատուած թիւնը Սիմոնէն ետքը անոնց կը պարտինք:

— Սիմոնը երբեք զմեզ պիտի չթողու, այնպէս որ եթէ պատահ մըն ալ հաց ունենանք, անոր ևս բաժին պիտի հանենք, աւելցուց Նավրի:

Նոյն պահուն կուզը ներս մտաւ, եզական ժպիտ մը անոր շրթունքին վրայ:

— Ձեզի իմացնելիք շատ կարևոր լուրեր ունիմ, ըսաւ ան:

— Որմէ՞:

— Պելլըվիլէն:

— Ի՞նչ կայ որ.... շուտ ըրէ՛. Միթէ զմեզ գտնելո՞ւ եկած է....

— Յուսամ որ ողջ առողջ է, աւելցուց Ռընէ, որ արդէն իսկ գիտէր թէ՛ իր ազատութեան երջանկութիւնը անոր կը պարտէր:

— Հռենոսը անցած է.... Գերմանիա կը գտնուի, պատասխանեց Կիյէն:

— Ո՞ւր, ըսէ՛ ուրեմն ի՞նչ որ գիտես.

— Ձեր առջևը կեցած է:

Այս խօսքիս վրայ՝ կուզին հասակը ուղղուեցաւ, խոշոր ծրար մը ինկաւ գետին. ան քաշեց փրցուց գորշագոյն մօրուքը, մեկդի նետեց կեղծամը:

Պեւքը վիշտէն զա:

Երկու երիտասարդները անոր կը նայէին զարմանքէն համրացած: Պեւքը վիշտէն զա, և շնորհալի ժպիտ մը բացուեցաւ դէմքին վրայ:

— Ես, ըսաւ, այս կարևոր կերպարանափոխութիւնը հնարեցի գործերս յաջողցընելու համար ժողովրդեան հետ: Մեր փախստեան ատեն ալ ասիկայ անհրաժեշտ էր և ձեզ իմ գաղտնիքս չյայտնելուս պատճառը՝ կը վախճայի որ յանկարծ ահամայ անխոհեմութիւն մը.... Բայց քանի որ ես դիմակիս մէկը վերուցի, նաև կըրնամ միւսն ալ ձեզի բոլորովին պարզել: Պեւքը չեմ ես այլ ևս....

— Դուն այլ ևս Պեւքը չեմ, գոչեց Նավրի սաստիկ զարմացած: Ուրեմն դուն ո՞վ ես:

— Հարցո՛ւր Ռենէին:

Նավրի աղջկան դառնալով տեսաւ որ գունատած էր ան:

— Հօրեղբայրս, հօրեղբայրս, պոռաց
յանկարծ:

— Այո՛, ես եմ:

Այս ըսելով, ան բոլոր հասակովը կանգ-
նեցաւ. մազերը ետե նետեց և աչքերը
զորս կը կեղծէր մէկդի զարձնել, ճիշդ
անոնց երեսը տնկեց:

— Ըսաւ. Ես այն մարդն եմ՝ որ այն-
քան դեռ խաղաց, քու հօրեղբայրդ Ֆրան-
սուա տ'Օպէն՝ Սալէօսիի դուքսը: Նայե-
ցէք ինծի տղաքս, և դուն Ռընէ, ըսէ՛
յանուն քու հօրդ, միթէ իրեն դէմ ըրած
բոլոր յանցանքներս չքաւեցի՞:

Ռընէ արտասուալից նետուեցաւ հօրեղ-
բօրը բազուկներուն մէջ:

— Ես կը կարծէի որ դուք բանտի մէջ
մեռած էք, ըսաւ օրիորդը:

— Այո՛ աղջիկս, բայց նորէն կեանքի
վերադարձայ: Մինչև հիմայ, շատ տեսակ
կեանք վարեցի և շատ անգամ մեռայ:
Սիրելի Ռընէս, շնորհակալ եղիր Աստու-
ծոյ՝ որ Նավրին ինծի խրկեց՝ քու դա-
տապարտութիւնդ իմացնելու համար: Այլ
ևս, մոռնանք անցեալը: Հիմայ Զուլիցերի
պիտի երթանք Քոսթանսա լճակին քովի
կալուածիս: Հոն՝ հանդիսով կը կատա-
րենք քու հարսանիքդ Ատրիէնի հետ և կը
սպասենք՝ մինչև որ լաւագոյն օրեր ծա-

գին Ֆրանսայի համար։ Այս օրերս շատ
հեռու չեն։ Տանթոն ինկած է, Ռոպէս-
փիէր կը տատանի, ական մը փորուած է
Հասարակապետութեան ներքեւ, միայն թէ՛
արիասիրտ անձ մը պէտք է՝ անոր կրակ
տալու համար։ Երբ դարձեալ խաղաղու-
թիւնը հաստատուի՝ Ֆրանսա կը դառնանք։
Բայց, ես տեսնեմ կամ ոչ այս երջանիկ
օրերը, միշտ ուրախութեամբ պիտի յիշեմ
թէ իմ կատարած բոլոր խաղերուս մէջ
գլխաւորը եղաւ կուզ Սիմոնի դերը։



1875
The following is a list of the
names of the persons who
were present at the
meeting of the
Board of Directors
of the
Company
held on
the
1st day of
January
1875.

1875

